

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԵՒ ՍԻՒՆԻՔՈՒՄ

Ա.

Յունիսի վերջին օրերից մէկն էր, երբ Եսթիֆլիսի երկաթուղու կայարանում, վագոնի մէջ նստած, անհամբեր սպասում էի գնացքի մեկնման։

Վագոնի մէջ այնքան տօթ էր, որ մարդուց նստած տեղը քրտինքը ծլծլում էր։

Նոյն վագոնում էին ի միջի այլոց տեղաւորուել և մի ռուս ու մի վրացի զինուորականներ, որոնք Հեռաւոր Արևելք էին ուղևորուում։ Առաջինը կանգնած էր պատուհանի մօտ և աշխատում էր հանգստացնել իր վզովն ընկած ամուսնուն, որ անկարող էր զսպել իր հեկեկանքը, իսկ երկրորդին ճանապարհ էր գցում նրա մօտ 20 տարեկան սիրուն սևազգեստ աղջիկը, որի աչքերը կարմրել էին և ուռել արտասուքից. նա այժմ աշխատում էր պահել իր լացը։

Կողքիս նստած էին երկու ռուս, երեւի երկաթուղային մեքենավարներ, որոնք գնում էին մօտիկ կայարաններից մէկը։ Դրանք հիմնաւորապէս երկրպագել էին Բաքոսին և իրանց հետ վագոն էին մտցրել մի տկճոր լիքը գինով։ Տկճորը դրել էին նստարանի տակ և յաճախ բնջուլթեամբ դիմում էին նրան «հօրթիկ» (толе-ночек) փաղաքշական խօսքով։

Գնացքը շարժուեց։ Բոլորը տեղաւորուեցին. ճանապարհ գցողները այլևս աւելորդ տեղ չէին բռնում։

Պատուհաններից քամի փչեց, դիւրացաւ մեր շնչառութիւնը:

Վրացի զինուորականը նստել էր իմ դիմաց: Բաքոսի երկրպագուներից մէկը հանեց նստարանի տակից «հորթիկին», ուղղելով նրան միքանի փաղաքշական ածականներ, — լքցրեց էմալէ թասը և դիմելով վրացի զինուորականին ասաց.

— Թոյլ տուէք, ձերդ պայծառափայլութիւն, խմել ձեր կենացը և ցանկալ ձեզ կատարեալ աջողութիւն պատերազմում: Տայ Աստուած, որ դուք վերագառնաք կռուից ողջ ու առողջ և ձեր կուրծքը զարդարուած լինի մի շարք շքանշաններով: Խմում եմ մեր արծիւների — ռուս հերոսների կենացը. թող դրանք ջարդ ու փըշուր անեն մեր յանդուգն թշնամուն... Ձերդ պայծառափայլութիւն, ինձ էլ կը վերցնէք ձեզ հետ, օ, ես նրանց ցոյց կը տամ...

Իշխանը շնորհակալութիւն էր անում. նա կասկած չուներ որ հզօր Ռուսաստանը կը յաղթի իր թշուկ օսոխին: Ինքը եղել էր ռուս-տաճկական պատերազմում և դիտէր ռուս զինուորի անվահերութիւնը. բացի այդ, նա համոզուած էր որ գենարալ Կուրոպատկինի նման ռազմագէտ հազիւ գտնուի աշխարհում:

— Կեցցէք, կեցցէք, բղաւեցին մեքենավարները, դէ՛ խմեցէք, ձերդ պայծառափայլութիւն. դուք հերոս էք, մեր բոլոր զինուորականները հերոսներ են, կեցցէ՛ն մեր արծիւները...

Երբ կայարաններից մէկում մեր այդ հարեանները անհետացան իրանց «հորթիկի» հետ, իշխանը իրան շատ թեթեւացած զգաց: Ազատուած տեղը բռնեց մի վրացի երիտասարդ քահանայ: Վրացի հոգեւորականը և զինուորականը իսկոյն ծանօթացան և զրոյցի բռնուեցին: Բնականաբար խօսակցութեան առարկան պատերազմն էր: Երևում էր որ քահանան հետևում է մամուլում լոյս տեսնող բոլոր տեղեկութիւններին. մինչդեռ իշխանը արհամարհանքով էր վերաբերում «գրչակների» և

«Թղթակիցներին» «յիմար», «սուտումում» հաղորդումներին. նա իրան մասնագէտ էր համարում և այն ինչ պրոֆաններին թուում էր յաղթութիւն — նա համարում էր պարտութիւն, և՛ ընդհակառակը. Զուր էր տէրտէրը փորձում առարկութիւններ անել. իշխանը հեղինակաւոր կերպով շարունակում էր զարգացնել իր ռազմական ծրագիրները. Կէս զիշեր էր և դեռ քնի մէջ եւ լսում էի դրանց տաք վէճը և՛ «ճապոնացի», «Պորտ-Արտուր», «ռուսաց էսկադրա», «գեներալ Կուրոպատկին» խոսքերը. Լուսաբացին իջայ Եւլախ կայարանում. մեր իշխանը ամուր փաթաթուել էր ետփնջում և խումիում էր, իսկ քահանան չկար:

*
* *

Եւլախը դտնւում է Քուռ գետի աջ (հարաւային) ափին. այդ կայարանից պոստային ճանապարհ է գնում դէպի հիւսիս՝ Շէքիի մայրաքաղաք Նուխին և դէպի հարաւ՝ Ղարաբաղի մայրաքաղաք Շուշին. եւ ուզում էի մի ուղևորութիւն կատարել մեր հին Արցախ և Սիւնիք նահանգներում, որոնք միասին այժմ բռնում են Գանձակ նահանգի մեծ մասը. Եւլախից Շուշի գնում են նաեւ մասնաւոր կառքեր. եւ վերցրի դեմոկրատիական հանրակառքում մի տեղ. ինձ տուին մի տոմսակ, որի վրայ նշանակուած էր գինը՝ 5 թուրքի. բանից դուրս ելաւ որ այդ գինը գոյութիւն ունի միայն նրանց համար, որոնք սովորութիւն չունին սակարկութիւն անելու. աւելի փորձուած ուղեկիցներս վճարել էին 2—3 թուրքի. Հանրակառքը լցուել էին հայ երեխաներ, կանայք և միքանի երիտասարդներ. մեզ հետ էր և մի հրէայ օրիորդ — տառաձառոյթ, որ ամառը գնում էր Շուշի իր արհեստը գործադրելու. Առաջի անգամը չէր որ Խորայէլի այդ դուստրը մինւմենակ ճանապարհորդում էր՝ սեփական աշխատանքով իր գոյութիւնը պահպանելու համար. նա միքանի անգամ գնացել էր նոյն նպատակով Թաւրիզ:

Իր պրակտիկի համար նա գիտէր հայերէն և թուրքերէն միքանի խօսք միայն։ Յուսահատուել չգիտէր այդ տոկուն և ընդունակ ցեղի զաւակը։

Հանրակառքը լի էր արդէն ճամբորդներով, երբ մի կայարան անց մի փափախաւոր թուրք էլ ուղեցնատել կառապանի մօտ։ Մեր ուղեկից շուշեցի պարօններից մէկը այնպիսի աղմուկ հանեց, այնպէս ուժգին սկսեց կռուել կառապանի և կոնդուկտորի հետ որ խեղճ թուրքը պիտի մնար ճանապարհին։ Նեղ դրութիւնը հնարագէտ դարձրեց նրան. մի ակնթարթում նա վեր մագըլցեց և նստեց հանրակառքի կտրին. այդ խորամանկութիւնը բոյորին ծիծաղացրեց, և թողին նրան այնտեղ տապակուելու արևի այրող ճառագայթների տակ։

*
* * *

Մեր ճանապարհը ընկած էր յատակի նման հարթ դաշտավայրով. հին Հայաստանի Ուտի նահանգով էինք առաջ ընթանում։ Մեզնից գէպի արևմուտք և հարաւ, հեռում, կապտին էին տալիս Արցախի լեռները, որոնք ականատես էին դեռ ևս երկու դար առաջ հայոց մեղիքների ազատագրական ջանքերին։

Հին Ուտին շատ յաճախ անցել է հարևան աղուանների ձեռքը, որոնց թագաւորութեան իսկական սահմանը եղել է Բուռ գետը։ Աղուանից աշխարհը բռնում էր այժմեան Շէքի-Շիրվանը։ Սակայն ի զուր չէ ասած «սահման քաջաց զէնն իւրեանց»։ աղուանները միշտ երբ իրանց ուժեղ են զգացել՝ տիրել են նաև Ուտի նահանգին, որ իր աշխարհագրական դիրքով Աղուանից աշխարհի շարունակութիւնն է։ Այժմ այդ աղուանների հետքն էլ չկայ Կովկասում, իսկ ուտիացիներից մնացել են երկու երեք գիւղեր Նուխիի կողմերում։ Իրաւ է, պատմական Ուտի նահանգի մայրաքաղաք և երբեմն Աղուանից կաթողիկոսութեան աթոռանիստ կենտրոն Պարտաւը այժմ էլ գոյութիւն ունի, սակայն նա ներկայացնում է այժմ

մի կոյտ ողորմելի խրճիթների, իրանց թուրք բնակիչներով։ Այդքան փոփոխական է ազգերի ճակատագիրը...

Դէպի հարաւ ընթանալով գոյաբուրժուազ անցնում էք Թարթար, Խաչէն, Գարգար գետերով, սրանք սկիզբ են առնում Արցախի բարձրաբերձ, անտառազարդ և զով լեռներում, ապա կատաղի հոսանքով իջնում են Առանի դաշտավայրը և ամառուայ տաքից լռում ու չորանում այդ տեղ, մերկացնելով այլանդակ քարերով ծածկուած իրանց հունը։ Լեռնոտ Հայաստանի այդ գետերը յիշեցնում են Հիւնապատ սարերում ազատ օդի մէջ մեծացած երէնքերը, որոնք մեռնում են, երբ նրանց վար են իջեցնում խորշակահար տափաստանները։

*
* *

Միայն Խաչէն գետը անցնելուց յետոյ նկատելի է դառնում ձեր վերելքը։ Եւ երբ մտնում էք Գարգար գետի հովիտը և անցնում նրա մուտքը երբեմն կապող Ասկերան բերդի աւերակների միջով—չընապատող բնութիւնը ստանում է լեռնային բնաւորութիւն։

Գետի միւս ափին տեղ-տեղ երևում են ոռոս գաղութականների հիմնած նոր գիւղերը, որոնք տեղական լանդշաֆտի մէջ տարբեր կուլտուրայի և կենցաղի տեսարաններ են մտցնում։

Խանքենդի կայարանից սկսած օձապտոյտ ճանապարհը արդէն զառիվեր գնում է Շուշի։ Դեռ չը հասած այդ քաղաքը դուք ճանապարհին առիթ ունէք տեսնելու մեր տնտեսական կեանքում տոկուսութիւն և ձեռնարկող ոգի ցոյց առնող շուշեցու նոր գործեր, գարեջրի գործարան, կաթնատնտեսական ֆերմա...

Արդէն միջնել էր։ Քաղաքը գտնւում է ծովի մակերևոյթից 5020 ոտնաչափ բարձր, սարի գագաթին։ Վերելքը բնականաբար դանդաղ էր կատարւում։ Բոլորըս սաստիկ ջարդուել էինք ու յողմել։ Երեխաները

ամենաանբնական զիրքերում անգամ քնել էին մեռելների նման: Կամքը թուլացել էր և մեծերի մօտ, մարդ անգոր է այդ յոգնածութեան մէջ իշխել իր ջղերի և մկանների վրայ, աչքի կոպերը ծանրանում են և իրանք իրանք խփում, շնայած ձեր բոլոր հակառակութեան, գլուխը թուլացած շինքի վրայ սկսում է ամեն կողմ օրօրուել, ինչպէս հասնացած հասկը քամուց: Երբեմն ննջողի գլուխը ինքն իրան այնպիսի թափով յետ է ընկնում մէջքի վրայ, որ թւում է թէ վիզը պէտք է կոտրուի, մարդ սթափւում է, կծում է շրթունքները որ ցաւից չքնի, սակայն իզուր, վաստակաբեկ օրգանիզմը ընկճուած է, կորցրել է իր կամքը և անձնատուր եղել քնին:

Յանկարծ այնպէս ուժով սկսեց մեր կառքը վեր վար թռչկոտել, աջ ու ձախ թեքուել, որ կարծես սաստիկ ալեկոծութեան բռնուած նաւակ լինէր: Պէտք էր ձեռքերով ամուր բռնել նստարանի կաշեքերից—կառքից դուրս չը նետուելու համար: Մենք մուտք էինք դործել Ղարաբաղի մայրաքաղաքը, և նրա խորդ ու բուրդ, քարերով ու փսսերով ծածկուած գլխաւոր փողոցը թափահարում էր մեզ, այդ ձևով բարի դալուստ» յայտնելով: Կարելի է առանց չափազանցութեան ասել որ Շուշուայ հիմնադիր Փանահ-Խանի օրից մինչև այժմ միայն մի փոփոխութիւն են կրել այդ «սալայատակները», այն էլ երբ Աղա-Մահմէդ-խանը աւերել է քաղաքի հետ և նրա փողոցները: Քաղաքացիները վերաշինելով իրանց սեփական տները, հասարակութեան սեփականութիւն—փողոցները թողել են աւերուած վիճակի մէջ. և դեռ երկար կը մնան այդպէս, որովհետև Ղարաբաղի «դուման» սպասում է որ Եւրոպայում սալայատակելու աւելի կատարելագործուած և էժան միջոցներ գտնեն. մի՞թէ արժէ քաղաքն ել ու մուտք անող կառքերի համար ծախքեր անել....

«Բարի գալուստի» ալեկոծութիւնից աւելի ցնցող էր Շուշուայ «բարի ճանապարհը»։ Ես և իմ ուղեկիցը վերցրել էինք պոստի կառք, լծած Ղարաբաղի չորս ոչ հռչակաւոր նժոյգներ։ Կառքը պէտք է բարձրանար Շուշուայ առաջնակարգ փողոցով և դուրս գար Կորիսի ճանապարհը։ Մի քանի քայլ արինք թէ չէ, պոստատան առաջ կառքը կանգ առաւ. նրա առաջի անիւները քարերից մերկացած փողոցի փոսերի մէջ էին ընկել, ձիերը չէին կարողանում դուրս քաշել կառքը քարերի և փոսերի խառնիխուռն աւերակներից։ Մենք դուրս եկանք կառքից. իջաւ և կառապանը, որ յոգնել էր խեղճ անասուններին մտրակելուց։ Կառապանին օգնութեան հասաւ մի իշապան իր գաւազանով. հարայհրօցը, ծածը անկարող էին օգնել հասարակութեան անհոգութիւնից առաջ եկած չարիքին։ Մեր ողբալի դրութիւնը այնքան սովորական մի բան էր թւում բուն շուշեցիներին, որ կողքի կոկիկ, քարաշէն տներից միայն ժպտում էին։ Ըստիպուած էինք մի քանի արհեստաւորներ հրաւիրել, որ մեր կառքի անիւներից բարձրացնեն։ Եւ այդպէս հարայհրօցից, մտրակի և գաւազանի հարուածներից ահաբեկուած ձիերը հազիւհազ կարողացան դատարկ կառքը դուրս բերել այդ երանելի քաղաքից...

Եւլախից մինչև Շուշի ամբողջ 104 վերստ տարածութիւն անցնելով կառքը, ձիերը, ճանապարհորդները ջարդուվշուր լինելու այնքան վտանգ չեն կրում, ինչքան այդ քաղաքի գլխաւոր փողոցով միքանի քայլ անելու ժամանակ։

Մենք ստիպուած էինք ամբողջ զառիվերը ոտքով բարձրանալ։ Ազատուելով քար ու փոսերից, քաղաքի դարբասի մօտ կառապանը կանգնեցրեց հալից ընկած ձիերին։ Մինչ մենք նստած կառքում սպասում էինք որ հանգստանան ձիերը, միքանի քայլ հեռու մեր առաջ ներկայանում էր կեանքի մի բնորոշ պատկեր. շուշեցի միքանի մանր առւտրականներ կանգնեցրել էին մի գիւղացու, որ շորու վրայ բարձած ճտերով լի կողով-

ներ՝ քաղաք էր գնում։ Վաճառականները պաշարել էին գիւղացուն, մէկը բռնել էր շորու սանձից, միւսը կըռները դրել էր կողոմների վրայ, որոնց մէջ ճվճվում էին ճտերը, իսկ երկու հոգի բռնել էին գիւղացու թւերից և օձիքից և «ման օլըմ, տուր, ման օլում, տուր» աղերսանքով պոկ չէին դալիս։ Գիւղացին չէր համոզուում «անաստուած էժան գնով» զիջել իր ապրանքը։

— Դէ, բաց թողէք, ձեռք քաշէք, չեմ ծախում, ասացի, թողէք ասում եմ...

Ո՞վ էր լսողը, տգրուկների պէս կպել էին և պոկ չէին դալիս... Կառքը շարժուեց տեղից, հեռուից ես յետ նայեցի. դեռ շարունակում էր բռնի սակարկութիւնը։

Բաւականին նեղ և անփոյթ շինած պոստային ճանապարհը ընկած է Գարգար գետի մի վտակի հոսանքով, ձորի արեւմտեան լանջի վրայ։ Կանաչապատ սարերի բուսականութիւնը աւելի ճոխ է դառնում երբ մօտենում էք «Թթու-Ջուր» կոչուած տեղին, որ Շուշուց գէպի հարաւ-արեւմուտք 18 վերստ հեռաւորութեան վրայ է գտնւում։ Թթու-Ջուրը զարաբաղցիների Կիսլովոդսկն է. նրանք սիրում են գործածել այն հանքային ջուրը, որ բղխում է այդ տեղում։ Արցախի այդ «նարգանը» շէրով ծախում են ոչ միայն Շուշի, այլ և Բազու, Գանձակ։ Թթու-Ջուրում ապրելու համար բնակարաններ չկան. եթէ յարմարութիւններ ստեղծուէին, նա կը դառնար զով և գեղեցիկ ամարանոցավայր։ Պոստային կայարանի դիմացի սարը տեսնելով՝ կարելի է հասկանալ թէ ինչու ռուսները Լրսօգորսկ (ճաղատ սար) են անուանել Թթու-Ջուրը. դիմացի մի գագաթ մերկ է և այդ «ճաղատութեան» շուրջ ծառերը խիտ անտառ են կազմում, որ առհասարակ ծածկում է բոլոր լեռնային լանջերը և ձորերը։ Նմանութիւնը ճաղատ գլխի շուրջ բուսած մաղերի հետ բաւական մօտ է, թէև ոչ բանաստեղծական, մանաւանդ երբ նկատում էք այդ անտառներում արածող հօտեր ու նախիրներ...

(Կը շարունակուի)

Լ. Ս.